




ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԸՆՏԻՐ ՏԵՂԱԿԱԿ ԳԵՎՈՐԳ ԱՐԻՔԵՊԻՍԿՈՊՈՍ

ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՐՏՔԸ ԻՐ ԺՈՂՈՎՐԴԻ ՀԱՆԴԵՊ

«Հայիւն քաջ դանձն իւր դնէ ի վերայ ոչխարաց, իսկ վարձկանն, որ ոչ է հովիւ, որոյ ոչ իւր են ոչխարք, իբրեւ տեսանէ զդայլն զի դայ, թողու զոչխարն եւ փախչէ եւ դայն յափշտակէ զնոսա եւ ցրուէ» (Յովհան. աւետ.) :

Քրիստոսավանդ այս պատգամին հաւատարիմ հայոց եկեղեցին, որպես աբթուն հովիւ, դարեր շարունակ պաշտպանել է իր ժողովրդի պայքարն օտար բռնակալների տիրապետութեան դեմ. նրա լայնագույն ներկայացուցիչները փոթորկի ու արհալիրքի ժամին, որպես անձնավեր առաջնորդներ, խրախուսել են իրենց զավակներին՝ լարելու բոլոր ուժերը, մաքառելու դժգոհութիւններն դեմ, կռիւլու հանուն մայր հայրենիքի ազատութեան եւ անկախութեան: Հայ եկեղեցու աշխարհի ներկայացուցիչներ են հանդիսացել Ներսէս Մեծը, Ղեփոնդ Երեցը եւ բազմաթիւ այլ եկեղեցական հայրեր, որոնց պաշտօն հիշատակը մինչև այսօր տոնում է հայ եկեղեցին:

Հայ անձնավեր հոգեւորականները ահա վոր թշնամու դեմ մղվող պայքարի ժամին խաչն ու ամբարաճնը ձեռքներին դնալի հաղթութիւն են առաջնորդել հայ զորքին, ողնչելով Ղեփոնդ երեցի հորդորական խոսքերով՝ «Մի թուլութեամբ լքանիցիմք, այլ պնդութեամբ օրտի եւ հաստատուն հաւատովք կամակար յարձակեցուք ի վերայ թշնամեացն, որ յարձակեալ դան ի վերայ մեր: Մեր յոյս մեզ կրկին երևի մեռանիմք՝ կեամք եւ եթէ մեռուցանեմք, մեզ նոյն կեանք առաջի կան» (Յղիչ):

Ողաղ կայսրի տարիներին եւս հայ եկեղեցականներն իրենց նմիքն են մեր եկեղեցու պայծառացմանը, հիմնել են վանքեր, նրանց կից դպրոցներ, զրի են

առել իրենց ժամանակի պատմական անցքերը, հարստացրել են եկեղեցական գրականութիւնը, ճոխացրել հոգեւոր տաղերգութիւնը: Այս ապարեղում նույնպէս հայ եկեղեցին ամել է աշխարհի փայլուն գործիչներ, ինչպես են՝ Ներսէս Մեծ, Սահակ Պարթեւ, Հովհան Մանդակունի, Ներսէս Ծնորձալի եւ ուրիշ խնկելի դեմքեր:

Հայոց պատմութեան մեջ քաղաքական անկման չընթանալն էլ հայ եկեղեցու առաջադր ներկայացուցիչները, հաւատարիմ մնալով մեր նախնայց ավանդներն, ջանացել են իրականացնել մեր ժողովրդի պենչերը, օգնել են նրան վերականգնելու իր քաղաքական անկախութիւնը:

Հայ ժողովրդի զարավոր այդ երազներն իրականացած ենք տեսնում այսօր: Ռուս մեծ ժողովրդի հետ միասին նա ձեռք բերեց իր քաղաքական ազատութիւնը, ստեղծեց իր սեփական պետական կյանքը՝ Հայաստանի Սովետական Ռեպուբլիկան:

Նորաստեղծ Ռեպուբլիկան կարճ ժամանակամիջոցում կերտեց նյութական բարձրարժեք կուլտուրա: Նախկին ճնշված, արհամարհված Հայաստանն աղքատութեան ճիրաններից ազատվելով, վերականգնացավ եւ վերածվեց ծաղկած, դուրավոր ու հարուստ մի երկրի:

Առաջնորդվելով իր նոր առաջավոր գաղափարներով, Սովետական Ռեպուբլիկան հայտարարեց իղճի ու կրոնի ազատութիւն եւ եկեղեցու անջատումը պետութիւնից:

Մեր ժողովրդի եւ եկեղեցու թշնամիները տարածեցին մոլորեցուցիչ լուրեր, որ իբր թի Սովետական իշխանութիւնը ճնշում է գործադրում հայ եկեղեցու եւ նրա կենտրոնի՝ Ս. Էջմիածնի վրա: Դա հերյուրանք է: Իրականութիւնն այն է,

որ նոր ռեսպուբլիկական կարգերում իկեղեցին ննթակա չէ որևէ ճնշման և միանդամայն գերծ է ամեն տեսակ միջամտումից նրա ներքին գործերին:

Վերահիշյալ ակտը եկեղեցու իրավունքների սահմանափակումը չէ կամ իրավունքների խախտումը, ինչպես կամենում են մոլորեցնել համատարածներին մեր հայրենիքի և եկեղեցու թշնամիները: Պետական այդ ակտը, ընդակառուելը, մեր եկեղեցուն ընծանում է լիակատար պայմաններ նրա ազատ ու անկաշկանդ գոյության համար:

Եկեղեցիների գոյությունը Սովետական Միության բաղձաթիվ քաղաքներում, Ամենայն Հայոց կաթողիկոսի ընտրության համար 1932 թվին իջմիածնում գումարված Աղգալին ժողովը, 1941 թվին իջմիածնում նույն նպատակով գումարված երկրորդ Աղգալին ժողովը արտասահմանյան թեմերի պատգամավորների մասնակցությամբ, Հայրապետական սլաշտոնական ամսադիր «Էջմիածնի» հրատարակություններ ներկա տարում, Հայկական Սովետական Ռեսպուբլիկայի Ժողովածոյետի 14-ն նոյեմբերի 1943 թ. որոշումը կազմակերպելու Ժողովումովետին կից Հայ Լուսավորչական եկեղեցու գործերի խորհուրդ, որը իրականացնելու է կապը Հայկական ՍՍՌ կառավարության և Ամենայն Հայոց կաթողիկոսի միջև այն հարցերի շուրջը, որոնք Հայկական ՍՍՌ կառավարության լուծում են պահանջում, այս բոլորը միարեան վկայում են մեր եկեղեցու ազատ ու անկաշկանդ գոյությունը Սովետական իշխանության օրոք:

Հայոց եկեղեցին իր ժողովուրդի նկատմամբ ունեցած սիրո և հողատար վերաբերմունքի ցայտուն օրինակներ ցուցաբերեց ներկա հայրենական մեծ պատերազմում: Եկեղեցին, մնալով հավատարիմ մեր նախնյաց պալանդներին, անմասն չմնաց մեծ Միության ժողովուրդների ազատագրական այն մեծ պայքարին, որին մասնակից է հերոսական Հայ ժողովուրդը ընդդեմ գերմանա-

կան Ֆաշիզմի, ընդդեմ մարդկության և կուլտուրայի ատելի թշնամու:

Մայր Աթոռն իր ժամանակին հանդես եկավ հայրենասիրական կոչերով ու համատարած հայ համայնքներին հորդոր կարգաց բոլոր միջոցներով ավակցել հայրենական սրբազան պատերազմին, ամուր պաշտպանել իր զավակների արյունով նրվածած սրբազան ազատությունը:

Ամեն հայ մարդ, որ նախանձախնդիր է իր հայրենիքի՝ Սովետական Հայաստանի ազատության ու նրա բարգավաճման, հայ ժողովուրդի ֆիզիկական անվտանգության ու հզորացման, պետք է հիշի գերմանական մարդակերները դադանությունները առաջին համաշխարհային պատերազմին: Այդ պատերազմում գերմանական կառավարությունը սպանդանոց դարձրեց Տաճկահայաստանը և բնակչին՝ արավ հարյուրհազարավոր անմեղ հայերի:

Գերմանական Ֆաշիզմը ծրարեց նույնպիսի սպանդանոց դարձնել նաև Սովետական Հայաստանը ներկա պատերազմում: Սակայն այդ նրան չհաջողվեց: Հայ անվահեր կտրիճները, վառված դուռնազանական պայքարի և դիմակալության ոգով, Սովետական Միության բաղձերանդ ժողովուրդներն անվահեր զավակներին հետ միասին հետ շարունակեց Ֆաշիստական հորդանքների կոկիկասի դուներեց և իրենց հայրենիքը փրկեցին բնաջնջումից, թալանից ու կոլոպուտից:

Ամեն հայ մարդ, որ ծանոթ է հայոց պատմության, պետք է իմանա, որ առաջին դեպքն է պատմության մեջ, երբ Հայաստանը դերծ է մնում ավերից ու կոտորածից ազդերի միջև տեղի ունեցող պատերազմներում: Սովետական Հայաստանի ազատության նախանձախնդիր ամեն հայ մարդ պետք է իմանա, որ Հայաստանը փրկվեց այս պատերազմի արհավիրքից միմիայն շնորհիվ Սովետական Միության հզորության և կարմիր բանակի հերոսության:

Այն ժամին, երբ հաղթական կարմիր բանակը ջախջախելով ատելի թշնամուն,

արտաքուստ է մեր սրբազան Հայրենիքի սահմաններից, Մայր Աթոռը հրատարակում է իր պաշտոնական ամսագիրը՝ «Էջմիածին»-ը:

Հայրապետական ամսագիրը հանդիսանում է այն միջոցը, որը պետք է համախմբի սփյուռքի բոլոր հայերին իրենց սրբազան Հայրենիքի շուրջը, Մայր Աթոռի շուրջը: Հայությանն ուղղված մեր կոչի մեջ ասել ենք. «Հայը, բացի Սովետական Հայաստանից, չունի այլ հայրենիք: Հայը Հայաստանից դուրս չունի այլ հաստատուն կուսան, բայց եթե Մայր Հայրենիքը, հայ եկեղեցին և նրան զլխավորող Ամենայն Հայոց Հայրապետական Աթոռով»:

Այս պատգամով հրապարակ է դալիս Հայրապետական ամսագիրը, նույն այդ

պատգամով նա կհարունակի իր գոյությունը և հետադարձ:

Հայրապետական Աթոռը հրավիրում է աշխարհի բոլոր մասերում ցրված հայերին համախմբվել մեր Մայր Հայրենիքի Հայաստանի շուրջը, Հայրապետական Մայր Աթոռի՝ Ս. Էջմիածնի շուրջը, պաշարել Ֆաշիզմի դեմ, մեր սրբազան Հայրենիքի, ողջ ազատասեր մարդկության ատելի թշնամու դեմ:

Ամենայն Հայոց Հայրապետությունն իր օրհնությունն է հղում իր հալատացյալ սրբերենքին և աղոթում, առ Աստված նրանց բարեկեցության և բարօրության համար:

Ամենայն Հայոց Հայրապետությունը հալատացած է նաև, որ նա իր ձեռնարկումների ժամանակ կստանա իր հալատացյալ որդիներին գործնական աջակցությունը:

ԱՄԵՆՊՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՋԳԸՆՏԻՐ
ՏՆՂԱԿԱԼ ԳԵՎՈՐԳ ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍ